ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԻԿՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԸ. ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2023.14-08

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՔՆԱՐԻԿ
ԳՊՀ դասախոս, Հայաստանի ազգային արխիվի
գիտահետազոտական աշխատանքների և
միջազգային կապերի բաժնի պետ,
պատմական գիտությունների թեկնածու
Էլփոստ՝ k_narik@mail.ru

Հոդվածում ներկայացվել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ, ASALA) հոգևոր հայր, ճարտարագետ, գրող և հրապարակախոս, շինարար և գյուտարար, հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարի մարտիկ ու գաղափարախոս Գուրգեն Յանիկյանի գործունեությունը:

Ներկայացվել է վերջինիս իրականացրած գործունեությունը Խորհրդային Ռուսաստանում, մասնավորապես Հյուսիսային Կովկասում հօգուտ սովյալների կատարած աշխատանքը, այնուհետև Իրանում՝ Թեհրան-Թավրիզ երկաթգծի, Իրանում առաջին մետաղաձուլման գործարանի, առաջին ստորգետնյա զինագործարանի կառուցումը և այլն:

Անդրադարձ է կատարվել ԱՄՆ-ում Գուրգեն Յանիկյանի գրական գործունեությանը, հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ նրա ծավալած պայքարին:

Հատկապես կարևորվել է Յանիկյանի կողմից ԱՄՆ-ում 1973թ. հունվարի 27-ին իրականացված գործողությունը թուրք դիվանագետների նկատմամբ, որով ազդարարվեց «հայ անհատի պատերազմը թուրքի դեմ»:

Արվել են եզրահանգումներ, կարևորվել Գուրգեն Յանիկյանի դերակատարությունը հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարի սկզբնավորման և ծավալման գործում:

Բանալի բառեր՝ *Գուրգեն Յանիկյան, Հայոց ցեղասպանություն, Հայ դատ, Հայկական հարց, Հայկական Նյուրնբերգ, Նեմեսիս, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ, Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ, Եռաբլուր:*

Հայոց ցեղասպանության հետևանքով հայության զգալի մասը հայրենազրկվեց, սփռվեց աշխարհի տարբեր երկրներում՝ ձևավորելով Հայկական սփյուռքը: Հայրենիքի մի փոքր հատվածը՝ Արևելյան Հայաստանը, 1922 թվականից գտնվելով ԽՍՀՄ-ի կազմի մեջ, զրկված էր հայոց պահանջատիրությամբ զբաղվելու հնարավորությունից: Հայ դատի համար պայքարում էր միայն սփյուռքը, Խորհրդային Հայաստանում նման օրակարգային խնդիր ընդհանրապես դրված չէր:

Հայոց ցեղասպանությունից ավելի քան կես դար անց՝ 1970-ական թվականներին, սփյուռքը, կանգնելով հայապահպանական լուրջ խնդիրների առջև, հայտնվել էր ծանր իրավիճակում:

Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև ծավալված սառը պատերազմի պայմաններում հայկական արդարացի պահանջները մղվել էին երկրորդական պլան: Սփյուռքում գործող հայ ազգային կուսակցությունների՝ ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի, կազմակերպությունների, Հայ դատի հանձնախմբերի, եկեղեցու կողմից տարվող ավանդական քաղաքականությունը Հայկական հարցի քարոզչության և լուծման ուղղությամբ (փաստաթղթերի հղում ՄԱԿ-ին, Եվրապառլամենտին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին, մեծ տերությունների ղեկավարներին) արմատական շրջադարձի չհանգեցրին: Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը չհաջողվեց հանել մոռացությունից և դարձնել միջազգային հարաբերությունների օրակարգի հարց:

Անհրաժեշտ էր մշակել և կիրառել պայքարի նոր ձևեր, որն իրեն երկար չսպասեցրեց: Նախորդ փուլում Հայկական հարցի համար մղված ավանդական պայքարը հաջողությամբ չէր ավարտվել, ուստի սփյուռքահայության մոտ ծնունդ է առնում այն տեսակետը, որ Հայկական հարցը լուծելու համար դիվանագիտական, քաղաքական միջոցներն անբավարար են: Որպես Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի գործնական ձև՝ առաջ է քաշվում աշխարհի տարբեր երկրներում Թուրքիայի դիվանագիտական աշխատողների ահաբեկչությունը՝ ազգային-ազատագրական պայքարի ձև, որը Հայկական հարցը պետք է հաներ փակուղուց և դարձներ միջազգային հարաբերությունների օրակարգի հարց[1]:

Հայկական զինյալ պայքարի առաջամարտիկը դարձավ Մեծ եղեռնի ականատես 78-ամյա Գուրգեն Յանիկյանը, որն ի վերջո համոզվելով, որ միայն ուժի գործադրմամբ է հնարավոր միջազգային հանրության ուշադրությունը բևեռել հայ ժողովրդի արդարացի դատի վրա, 1973 թվականի հունվարի 27-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սանտա Բարբարա քաղաքի Բալթիմոր հյուրանոցում գնդակահարեց Թուրքիայի հյուպատոս 47-ամյա Մահմեդ Բայդարին և փոխհյուպատոս 30-ամյա Բահադր Դեմիրին՝ արձակած 13 փամփուշտներով ազդարարելով աշխարհին, որ սկսվում է հայոց պատմության նորագույն էջը, որտեղ ուժն է լինելու հայի միակ լեզուն աշխարհի հետ խոսելիս[2]:

Թաքցնելով իր հայ լինելը և ներկայանալով որպես պարսիկ «Գուրգի Յանի խան», որը կյանքի վերջին տարիներին ցանկանում էր տարբեր երկրներից շքանշաններ ստանալ, Գուրգեն Յանիկյանը թուրք դիվանագետներին խոստացել էր նվիրել թուրք, պարսիկ, արաբ և այլ ազգության մի շարք պաշտոնյաների ստորագրություններով թուրքական մի թղթադրամ[3] և սուլթան Աբդուլ Համիդի սենյակից հանված մի կտավ: Գիտակցելով, որ այդ հնաոճ իրերն արժեք կունենան թուրքերի համար, Յանիկյանը պայմանավորվում է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան

---

[1]Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Ե., 1995, էջ 60:

[2] The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), Documentation on Military Operations and Publikations, Documents gathered and prepared by Sako Oknayan, Yerevan, 2022, p. 177.

[3] ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 36, թթ. 2-3: Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, Լոս Անջելես, 2001, էջ 15: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 175.

աշխատակիցների հետ՝ կազմակերպելու համար դրանց նվիրատվությունը: Կայացած հանդիպմանն էլ իրականացրել էր թուրք դիվանագետների գնդակահարությունը:

Նկարագրելով երկու թուրքերի գնդակահարությունը՝ Յանիկյանը նշում է. *«Հանդեպ նրանց, որոնք ինքնակամ գալու էին ինձ տեսնելու, ես ոչ մի զգացում չունեի: Նրանք ինձ համար միջոց էին՝ հասնելու ցանկությանս: Եթե լինեին ուրիշները, ինձ համար տարբերություն չէր ունենալու: Զգացի, որ լալիս եմ: Արցունքները թափվում էին աչքերիցս առանց հեկեկանքի, բայց այդ խղճալու կամ փրփանվելու արցունքներ չէին, այլ՝ կատաղության, որ դեպքերի ընթացքն այնպես դասավորվեց, որ ես դիմելու եմ մի միջոցի, որին միշտ դեմ եմ եղել»*[4]:

Երկար էր մտածել իր քայլի մասին Գուրգեն Յանիկյանը. ինը տարեկանում նա տեսել էր իր կյանքը փրկած ավագ եղբոր՝ Հակոբի սպանությունը թուրքերի կողմից[5], Հայոց ցեղասպանության արհավիրքը, ցեղասպանությունից մազապուրծ իր հայրենակիցների տառապանքներն ու զրկանքները, աշխարհի անտարբերությունն ու թուրքական ժխտողականությունը և որպես իր կյանքի վերջնական նպատակ՝ որոշել էր իրագործել Հայկական Նյուրնբերգը:

Իր քայլով Յանիկյանը հայտարարեց «հայ անհատին պատերազմը թուրքին դէմ»[6]: Գործողությունից առաջ, 1972 թվականի դեկտեմբերի 26-ին Յանիկյանը բաց նամակներ է ուղարկում ԱՄՆ նախագահին, սենատին, կոնգրեսին, ամերիկյան ու հայկական թերթերի խմբագրություններին և 300 հայերի իր քաղաքական ծրագրի մասին՝ նշելով. *«ՀԱՅ անհատը սկսել է իրագործել իր հայտարարած նոր տեսակ պատերազմը, ստանալու համար իր իրաւունքները վայրենի գազաններից, որին տաճկական կառաւարութիւն են անուանում»*[7]: Ըստ Յանիկյանի՝ հայ անհատը, վերջապես զարթնելով երկար քնից, պետք է անհատապես ներկայացնի իր պահանջները «տաճիկ գազաններին նրանց հասկանալի լեզվով»: Դա նոր ձևի պատերազմ է, որը հայ անհատը շարունակելու է մինչև վերջնական հաղթանակը, թուրքական կառավարության ներկայացուցիչները ոչնչացվելու են ամենուր և անխտիր, ինչ անվան տակ էլ հրապարակ գան:

Գործողությունից կես տարի առաջ նա հայ ժողովրդին ուղղված կոչ գրեց և ուղարկեց հայկական թերթերին.*«Ես ոչ միայն մենակ մնալու չեմ, այլ ԼԻՆԵԼՈՒ ԵՄ ե՛ւ առաջինը, որ պիտի հնչեցնէ այս նոր ձեւի պատերազմի հրաւիրող փողը:*

Անցած տարիները եկան ինձ ապացուցելու, որ այս աշխարհում ազատութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն եւ սրանց նման բարձր գաղափարների իմաստը, եթէ այսպէս շարունակւի, շուտով միայն բառարաններում են գտնւելու:

Բավական է որքան հայ անհատը դռնեդուռ ընկած ողորմութիւն է աղերսում մարդկութիւնից:

Ես՝ անհատս, ո՛չ ցանկութիւն ունեմ այլեւս լռելու եւ ո՛չ էլ ժամանակ:

Միակ ցանկութիւնը, որ մնում է իմ մէջ, այդ է՝ չլինել միակն այս ձեւի պատերազմն իրականացնելու գործում: Վերջնական հաղթանակը լինելու է մե՛րը, կասկած չունե՛մ:

---

[4] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն: Հուշագրություն, Երևան, 1999, «Տիգրան Մեծ» հրատ.,էջ 57:Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 292: Գուրգեն Յանիկյան ականատեսն ու վրիժառուն. 8 փաստ, https://mediamax.am/am/news/parzabanum/33391:

[5] The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 175.

[6] Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ), Վաւերագրութիւն զինեալ եւ հրատարակչական գործունէութեան, աշխատասիրեց՝ Սագօ Օգնայեան, Հրատարակութիւն Լիբանանի «Սփիւռք» պարբերաթերթի, Երեւան, 2015, էջ 59: Gourgen Yanikian – the spiritual founder of ASALA,January 26, 2015, http://www.aniarc.am/2015/01/26/gourgen-yanikian-the-spiritual-founder-of-asala/

[7] ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 31, թ. 1:

Շեփոր դարձած քնարներով չէ, որ Հայ անհատը հրապարակ է գալիս իր արդար իրաւունքները պահանջելու համար, այլ կամքով ու զենքով:

Դո՛ւք՝ Հայ ազգի զաւակներ, ՆԵՄԵՍԻՍՆԵՐ դարձած, հարաւածե՛ք թշնամուն ամեն տեղ, որտեղ դուք ինքներդ հարմար կը գտնէք»[8]*:*

Իր գաղափարախոսությունը Յանիկյանն անվանում է Յանիկյանականություն: *«Մենք որ աշխարհիս ամենահին ազգերից մեկն ենք, մենք որ քանիցս անգամ, երբ պատմութեան փոշին ուզել է մեզ ծածկել, շնորհիւ մեր զաւակների կամքին նոր ծնունդ ենք առել եւ նրանց զոհողութեամբ մինչ այսօր էլ ապրում ենք մեր անունով ու Նաիրեան կամքով, պիտի մոռանա՞նք արդեոք թուրք կոչւող վայրենի ցեղը:*

...Հայ անունը կրողը չի կարող եւ երբեք մոռանալու չէ: Ուրիշ կերպ մտածողները թող դադարին իրենց հայ կոչելուց:

Հարցը վերաբերում է ամեն մի հայ անհատի, որը իրեն Հայ է անուանում: Հարցը կապուած է ամեն մի անհատի հետ, որի երակներում հոսում է Նաիրեան արիւնը»[9]*:*



1973 թվականի հունվարի 27-ի գործողությանը հետևեց Յանիկյանի դատավարությունը: Կուսակցությունները ցանկանում էին, որ Յանիկյանը դատարանում հանդես գար իրենց անունից, սակայն նա հայտարարեց, որ ոչ մի կուսակցության, հոսանքի և խմբակցության անունից հանդես չի գալիս, նա անհատ է, որը գործել է ինքնուրույն՝ իր իսկ որոշմամբ[10]:

Յանիկյանին պաշտպանելու համար նույն տարում Լոս Անջելեսում կազմվում է համահայկական հանձնախումբ՝ «Հայ նահատակներու ամերիկացի բարեկամներ» անունով, որին մասնակցում էին հայկական կուսակցությունների բոլոր ներկայացուցիչները[11]: Հանձնախմբի գործունեությունը կարճ տևեց, քանի որ Յանիկյանի բնորոշմամբ՝ նրանց համար ուրիշ շահեր էին առաջնային: Այնուհետև Յանիկյանի նախաձեռնությամբ ստեղծվում է «Գուրգէն Եանիկեանի պաշտպանութեան յանձնախումբը» ՀՅԴ գործիչ Լևոն Երկաթի նախագահությամբ, որին վստահված էր Յանիկյանի դատի պաշտպանության համար հանգանակություններ կատարելու, կոչեր պատրաստելու, փաստաբաններ գտնելու և վարձելու, դատավարությանն ու իրավական այլ գործընթացներին պաշտոնապես մասնակցելու աշխատանքները[12]: Յանիկյանի պաշտպաններից էին համաշխարհային ճանաչում ունեցող փաստաբան Ֆորմանը, Ջեյմս Լինզին, Հարի Յումենը, Վազգեն Մինասյանը:

Դատարանում Գուրգեն Յանիկյանը հանդես եկավ հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության դեմ, հայոց պահանջատիրության, Արևմտյան Հայաստանի ազատագրության պաշտպանությամբ: Նա ցանկանում էր իր դատավարությունը վերածել Հայոց եղեռնի Նյուրնբերգի, սակայն դատարանը դա թույլ չտվեց: Դատավարությունից 25 տարի անց՝

---

[8] Նույն տեղում, թթ. 12-13; ց. 2, գ. 6, թթ. 28-29:

[9] Նույն տեղում, ց. 1, գ. 31, թ. 9; ց. 2, գ. 6, թ. 25:

[10] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 8, 33:

[11] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 2, թ. 2-ի շրջ; գ. 6, թ. 1: Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 73:

[12] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 2, թ. 2 և շրջ; գ. 6, թ. 4:

1998 թվականի հունվարի 25-ին, դատախազ Դեյվիդ Մինները «Ֆրեզնո Բի» օրաթերթում հրապարակած հոդվածում հայտնում էր իր զղջումը հայկական Նյուրնբերգը ձախողելու համար, քանի որ թույլ չէր տվել, որ պատմության մութ էջերը՝ ցեղասպանությունները, բացահայտվեն ու այլևս չկրկնվեն[13]:

Դատավարությունից առաջ Յանիկյանի փաստաբաններից Վազգեն Մինասյանը դատախազ Միներին էր հանձնել Սողոմոն Թեհլիրյանի մասին Լինդի Ավագյանի «Խաչը եւ մահիկը» գիրքը և կոչ էր արել նրան դառնալ աշխարհում արդարության խորհրդանիշ և ցեղասպանության դեմ վճիռ արձակել[14]: Սակայն Մինները Յանիկյանի փաստաբաններին թույլ չէր տվել դատավարությանը ներկայացնել Հայոց ցեղասպանությունից վերապրողների և պատմաբանների վկայություններն ու լուսանկարչական փաստերը ցեղասպանության մասին[15]: Դատավարության ժամանակ միայն Յանիկյանն ու իր թարգմանիչ Արամ Սարոյանն (Վիլյամ Սարոյանի հորեղբոր որդին) են ներկայացնում հայոց ցեղասպանության փաստերը: Հայտարարելով, որ թուրք դիվանագետներին սպանել է որպես «իր ազգը ոչնչացրած կառավարության» ներկայացուցիչների, Յանիկյանը 6 օր շարունակ ներկայացնում է Հայոց ցեղասպանության սարսափելի տեսարանները, իր ընտանիքի 26 անդամների սպանությունը:

«Ես երկու մարդ չեմ սպանել, այլ երկու չարիք եմ ոչնչացրել: Ինձ համար նրանք մարդ չէին»[16],-դատարանում ասել է Գուրգեն Յանիկյանը:

Աղմկոտ դատավարությունն ավարտվեց նրանով, որ 1973 թվականի հուլիսի 2-ին Յանիկյանը դատապարտվեց ցմահ ազատազրկման: Հետագայում ՀԱՀԳԲ-ն ցանկանում է Յանիկյանին բանտից ազատել այլ ճանապարհներով, սակայն վերջինս մերժում է, պատճառաբանելով, որ բանտից իր ազատումը մեծ զոհերի և դրամի կարիք ունի, բացի դրանից՝ փախուստից հետո ինքը չէր կարող հրապարակ գալ և ազատ գործել: Ուստի նա ավելի օգտակար է գտնում մնալ որպես նպատակի խորհրդանիշ, որը ճիշտ ժամանակին էր նոր հասակ առնող հայ երիտասարդության համար[17]:

1979 թվականի սկզբներին, նկատի առնելով Գուրգեն Յանիկյանի առաջացած տարիքը և առողջական վիճակը, որոշվում է ազատ արձակել նրան, սակայն Լոս Անջելեսի թուրք նոր ընդհանուր հյուպատոս Քեմալ Արիքանը 1979 թվականի հունվարի 29-ի պաշտոնական նամակով ամերիկյան իշխանություններից պահանջում է Յանիկյանին երբեք ազատ չարձակել բանտից, քանի որ վերջինս «շատ վտանգավոր անձ» է և կարող է նույն արարքը կրկնել[18]:

10 տարի բանտում անցկացնելուց հետո իշխանությունների միջնորդությամբ՝ Յանիկյանը շարունակում է կրել պատիժը տնային կալանքի պայմաններում: 1984 թվականի փետրվարի 10-ին բանտից փոխադրվում է հիվանդանոց, որտեղ և մահանում է փետրվարի 27-ին: Մահվան լուրը

---

[13] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 20, 205:

[14] Նույն տեղում, էջ 205:

[15]Նույն տեղում, էջ 205-206: «Հարվածե՛ք թշնամուն ամեն տեղ», http://www.hayzinvor.am/12252.html:

[16]ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 6: Լեւոն Երկաթ, Հայկական Ուօթըրկէյթ (Գ.Յանիկեանի առաջին դատավարութեան շուրջը), Նոր սերունդ, ամսաթերթ, Գ. Տարի, թիւ 6 (27), Յունիս, 1977:

[17] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 70:

[18] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 207: Թուրք դիվանագետ Քեմալ Արըքանը սպանվել է 1982թ. հունվարի 28-ին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ 19-ամյա Համբիկ Սասունյանի և Գրիգոր Սալիբայի կողմից:

հրապարակվեց «Նյու-Յորք թայմս» ամսագրում 1984 թվականի մարտի 1-ին՝ «Բանտարկված հայը մահացել է» վերտառությամբ փոքրիկ տեղեկատվությամբ[19]:

Հունվարի 27-ի գործողությանը Գուրգեն Յանիկյանը նախապատրաստվել էր երկար տարիներ, թեև գործողության հիմնական ծրագիրը մշակել էր 5-6 ամիս առաջ: 1972 թվականի աշնանը նա ԱՄՆ-ից այցելեց հայրենիք և Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանին նվիրաբերեց Մ. Սարյանի երկար տարիներ կորած համարվող «Արևելյան սենյակ» նկարը[20], իսկ Հայաստանի պատմության թանգարանին հանձնեց հայկական հնագույն արքայական կնիք հանդիսացող մատանին[21]: Այդ այցի ժամանակ Գուրգեն Յանիկյանն իր անձնական արխիվը հանձնեց Հայկական ԽՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվին[22]:

Հետագայում իր հուշագրություններում Յանիկյանը գրեց Երևանում իր հետ պատահած մի դեպքի մասին, որից հետո համոզվել է, որ ընտրած ուղին և ծրագիրը արդարացված են: *«Հյուրանոցից ոչ հեռու փոքրիկ տնակներ կային: Բնակիչներն արդեն բակում էին եւ պատրաստվում էին գործի գնալ: Իմ ուշադրությունը գրավեց գլուխը շալով փաթաթած մի կին, որը մառանից դուրս էր քշում մի կով: Երբ կինը տեսավ փայլող Արարատի գագաթն ու արեւի ճառագայթների արտացոլումը, մոռացավ իր կովը, հպարտությամբ բարձրացրեց գլուխը, նայելով դեպի լեռը՝ խաչակնքվեց ու մի քանի վայրկյան սառած նայում էր տեսարանին:*

Միթե այս մի փաստը բավական չէ հրամայելու աշխարհին, որ վերադարձնեն մեզ մեր լեռը . . . :

Այս տեսարանից հետո հասկացա, թե ի՞նչ է ամեն մի հայի համար, նույնիսկ կոմունիստական Հայաստանում, մեր Արարատը, որը տաճիկներին են նվիրել խաբեբա միջոցներով»[23]*:*

Գուրգեն Յանիկյանը դրեց հայկական պահանջատիրության նոր փուլի սկիզբը և դարձավ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի հոգևոր հիմնադիրը: Յանիկյանի գործողությունից երկու տարի անց 1975 թվականին ծնվեց մի կազմակերպություն՝ «Արգելափակեալ հերոս Գուրգէն Եանիգեանի հեղափոխական խմբակ» անունով, որը կարճ ժամանակ անց վերանվանվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ և սկսեց իր գործունեությունն ամբողջ աշխարհում՝ թիրախավորելով թուրք դիվանագետներին:

Ո՞վ էր տաղանդաշատ ճարտարագետ, գրող ու հրապարակախոս, շինարար ու գյուտարար, հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարի հերոս Գուրգեն Յանիկյանը: Ծնվել է 1895 թվականի դեկտեմբերի 24-ին Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) քաղաքում: Քանի որ նա լույս աշխարհ եկավ համիդյան ջարդերի ժամանակ, կրեց «Ջարդի տղա» անունը[24]:

---

[19] Imprisoned Armenian Dies, https://www.nytimes.com/1984/03/01/obituaries/imprisoned-armenian-dies.html. Գուրգեն Յանիկյան՝ Հայկական Նեմեսիս, April 13, 2021, http://www.aniarc.am/2021/04/13/gurgen-yanikyan-armenian-text-new-york-times/.

[20] ՀԱԱ, ֆ. 440, g.2, գ.3, թ. 2:

[21] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 249:

[22] ՀԱԱ, ֆ. 440, g. 1, գ. 24, թ. 1:

[23] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 49-50: Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 273:

[24] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 4, 9, 78:

Հայրը լավ հարաբերություններ ուներ Կարինում պարսկական հյուպատոսի հետ, որի օգնությամբ Յանիկյանների քսանութ հոգուց բաղկացած գերդաստանը ապաստանում է պարսկական հյուպատոսարանում և փրկվում կոտորածներից[25], այնուհետև անցնում Կարս:

Քաղաքական նպատակով դարձել է պարսկահպատակ, սովորել Նոր Նախիջևանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել Մոսկվայի պետական և Ժնևի համալսարանները, ստացել ճարտարագետի վկայական: Մասնակցել է Մոսկվայի և Թիֆլիսի հայտնի դերասանական խմբերի, նաև Վահրամ Փափազյանի խմբերի ներկայացումներին:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918) ժամանակ հայկական կամավորական 2-րդ գնդի կազմում մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտերին, հայտնաբերել և պայթեցրել թուրքական ռազմամթերքի մեծ պահեստ, իր 50 ընկերների հետ խումբ կազմած՝ Դրոյի գնդում պարտականություն է ստանձնել վերաշինել քանդված կամուրջները, ռուսական բանակի անցումը և հայ գաղթականների փոխադրությունը դյուրացնելու համար կառուցել նոր ճանապարհներ, կատարել հետախուզական աշխատանք թշնամու թիկունքում[26]: Այդ պաշտոնում ծառայել է վեց ամիս, ռուսական բանակի հետ հասել Վան, Էրզրում, Կարս: Այս ընթացքում նա սարսափելի տեսարանների է ականատես դառնում և ուխտում պայքարել հայության արդարացի իրավունքների վերականգնման համար:

Ապագա կնոջը՝ բժշկուհի Շուշանիկ Քյոմուրճյանին[27], հանդիպել է Խարկովում, որը ամուսնությունից (1924թ.) մինչև իր մահը (1974թ.) հավատարմորեն աջակցել է ամուսնուն:

1929-1930թթ. Գուրգեն Յանիկյանը սովից փրկել է Կովկասից մինչև Դոն գետը տարածվող շրջանի 40 մլն բնակչությանը՝ 45 օրում սերմացուն հասցնելով գյուղացիներին[28]: Հյուսիսային Կովկասում հոգուտ սովյալների կատարած աշխատանքի համար պարգևատրվել է խորհրդային կառավարության կողմից և ստացել իր տիկնոջ հետ Իրան մեկնելու արտոնություն՝ վավերացված Ստալինի ստորագրությամբ[29]:

1930 թվականին տիկնոջ հետ մեկնել է Իրան՝ Թավրիզ, որտեղ հիմնել է իր գրասենյակը (ավելի քան 300 աշխատողներով), երկրի առաջին մետաղաձուլարանը, արժանացել Պատվո նշանի (1930թ.), կառավարության պատվերով պատրաստել Իրանի նշանավոր անձանց ու թագավորների մետաղե արձանները, կառուցել երկրի առաջին ստորգետնյա զինագործարանը, երկաթուղագծեր, ճանապարհներ, կամուրջներ, կարգավորել Թեհրանի էլեկտրական լուսավորության գործը[30]: Իրանում հիմնել է «ՌԱՀՍԱԶ» (ճանապարհներ շինող) ընկերությունը, որը գործել է միայն կառավարական պատվերներով[31]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-1945թթ.) ընթացքում Պարսից ծոցից մինչև խորհրդային սահման ցամաքային ճանապարհը մեկ տարվա փոխարեն կառուցել է 6,5 ամսում: Ճանապարհի շնորհիվ ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից դեպի Խորհրդային Միություն եկող

---

[25] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 11: Տե՛ս նաև՝ Թևեքելյան Ա., ԱՍԱԼԱ-Ի (ՀԱՀԳԲ) նախահայրը. Գուրգեն Յանիկյան (1895-1984), 24.12.2018, http://www.genocide-museum.am/arm/24.12.2018-Yanikyan.php?fbclid=IwAR3qymrDdpRekIOTpdnhUW2Q31SH_RYCN4BIilb6CgBbhNsWUV1wGGtfnso

[26] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 13:

[27]Շուշանիկ Քյոմուրճյանը նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, պատմագիտական երկերի հեղինակ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի (1637-1695) տոհմի շառավիղն էր: Գուրգեն Յանիկյանը երեխաներ չի ունեցել:

[28] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 15-16:

[29] Նույն տեղում, էջ 16:

[30] Նույն տեղում: Армянский вопрос. Энциклопедия/Ред. Кол.: К.С.Худавердян (отв. ред.) и др., Ер., 1991, с. 348.

[31] Յանիկեան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 15: Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 133-134:

զինամթերքն այլևս ծովով չէր գալիս, խուսափելով գերմանական սուզանավերի հարձակումներից, այլ փոխադրումները սկսեցին իրականացվել ցամաքային ճանապարհով՝ Իրանի տարածքով:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ-ին մատուցած ծառայությունների համար Գուրգեն Յանիկյանը ստացել է ԱՄՆ-ի քաղաքացիություն, 1946 թվականին հաստատվել է ԱՄՆ-ում և շարունակել արդյունաբերողի ու գյուտարարի իր գործունեությունը:

ԱՄՆ-ում ճանաչման է հասել որպես անգլալեզու գրող, 1950 թվականին ընտրվել է «Մարկ Տվեն» միջազգային հեղինակավոր կազմակերպության պատվո ցմահ անդամ[32]: 1950-1951թթ. Կալիֆոռնիայի «Ո՞վ է, ո՞վ» 1200 աչքի ընկնող գործիչների ցանկում ներառվել է նաև Գուրգեն Յանիկյանը[33]: Եղել է նաև ամերիկյան «Կապույտ գրքի», Նյու Յորքի գրականության և գիտության հայտնի հաստատությունների պատվո անդամ[34]: Արժանացել է արվեստի և գրականության շվեյցարական հայտնի գրական և գիտական հաստատության ցմահ պատվո անդամի կոչման, որի 1800 անդամներից 785-ը ԱՄՆ-ից էին, նրանցից միայն երկուսն էին հայ՝ Վիլյամ Սարոյանը և Գուրգեն Յանիկյանը[35]:

Տիրապետել է 6 լեզվի: Գրական-իմաստասիրական մի շարք երկերի հեղինակ է՝ «Հուդայի հաղթանակը», «Հարեմի խաչը», «Համբարձված Հիսուսը», «Մի ամերիկացու ձայնը», «Անհատը», «Կյանքի սիմֆոնիան», «Մեր մեսիան», «Դրախտը», որոնք թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն: «Նեգրուգ» ստորագրությամբ եվրոպական թերթերում գրել է քաղաքական, աստվածաբանական մի շարք հոդվածներ, որոնց ծանոթ էր նաև թուրքական կառավարությունը[36]:

ԱՄՆ-ում հաստատվելուց հետո Յանիկյանը փորձել է Հայոց ցեղասպանության փաստն ու Հայկական հարցը ներկայացնել օտարներին: Այդ նպատակով իր նյութական միջոցներով ձեռնարկել է Հայոց ցեղասպանության մասին ֆիլմի նկարահանման աշխատանքները և «Դրախտ» փաստական գիրքը վերածել է թուրքական բարբարոսությունները ներկայացնող 20 ժամ տևողությամբ շարժապատկերի[37]: Խոսելով ֆիլմի մասին՝ Յանիկյանը նշում է. *«. . . Ես ուզում էի մի այնպիսի աղմուկ բարձրացնել, որ ոչ միայն Ամերիկան, այլ ամբողջ մարդկությունը չկարողանար այլեւս անուշադիր թողնել մեր ցեղի արդար պահանջները: Ուզում էի ստեղծել մի իրավիճակ, որի արդյունքը լինելու էր Հայկական Նյուրնբերգը: Ես ուզում էի այդ անել՝ որպես իմ կյանքի վերջնական նպատակ, եւ կատարել պարտականությունս դեպի իմ անձնական զոհերը, դեպի իմ ցեղի զոհերը եւ սթափեցնել Ամերիկան... Համոզված եմ, որ եթե հայկական ցեղասպանության հարցը չստանա իր արժանի լուծումը, մարդկությունը պիտի անհետանա այս երկրագնդի երեսից»[38]:* Սակայն հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ֆիլմը կիսատ է մնում գումար չլինելու[39], ԱՄՆ-Թուրքիա ընդհանուր շահերի և ԱՄՆ-ի խոչընդոտելու պատճառով:

---

[32] ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 40, թթ. 12, 23:

[33] Նույն տեղում, թ. 12:

[34] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 176:

[35] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6:

[36] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ. , Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18:

[37] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ. , Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 175-176:

[38] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 26:

[39] Ֆիլմի վրա Յանիկյանն իր անձնական միջոցներից ծախսել է ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլար, նկարահանումները կատարել է Արևելքի այն վայրերում, որտեղ կատարվել էին հայերի ջարդերը: Իրանում իր կառուցած

Գուրգեն Յանիկյանը երկու անգամ եղել է Դեր Զորում և Բաղդադում, այցելել 1915թ. հայկական կոտորածների վայրերը: 1951 թվականին հիմնել է «Էն էպրիլ սոնկ» թատրոնը[40]: Ստեղծել է ընդերքը 1400 մ խորությամբ դիտարկող «Յանիկսքոֆ» սարքը[41]: Իր գյուտի համար ամերիկյան կառավարությունից ստացել է շնորհակալագիր և նյութական նվեր: Նյութական նվերը վերադարձնելով կառավարությանը՝ խնդրել է սարքը գործածել միայն բարի նպատակների համար: Հետագայում Յանիկյանն այդ սարքի միջոցով ցանկանում է հետազոտել Դեր Զորի անապատները, հավաքել հայերի կմախքներն ու հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան կանգնեցնել, սակայն սարքի օգտագործման թույլտվությունը ստանալու նրա դիմումը ամերիկյան կառավարությունը մերժում է[42]:

Այս ամենին հետևում է 1973 թվականի հունվարի 27-ի գործողությունը: ***«Ես իմ ամբողջ գրությունների մեջ միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ բռնությունը պետք է ոչնչանա մեր կյանքում: Բայց երբ այս բոլորը կատարվեցին, եւ մարդկությունն ու համայն աշխարհը լուռ մնացին Հայկական հարցի նկատմամբ, այն ժամանակ որոշեցի, թե ինչպես կարող եմ մարդկության եւ պետությունների ուշադրությունը կենտրոնացնել Հայ դատի վրա»***[43]***:***

Բանտից ուղարկված ձայնագրության մեջ նա բացատրում էր, թե ինչու է դիմել նման քայլի. *«Հայկական դատը ինձ համար մի հասկացողություն ունի՝ մեզանից գողացված ու թուրքին նվիրած մեր հայրենական հողերը հետ ստանալ: Մեր դատը գերեզման էր դրված ու պատրաստվում էին ծածկել մոռացության քողով: Որպես մի հայ անհատ ես չէի կարող ընդունել այդ: Պապերիցս ստացած արդարության ոգին իմ ներսում հրաբուխ դարձած դուրս ժայթքեց ու այրեց թաղումը կատարողների դեմքերը: Ու ես, տասնյակ տարիների մոռացության փոշուց մաքրելով Հայկական դատը, դրի մարդկության առաջ»*[44]*:*

Յանիկյանի արարքն ու ԱՄՆ դատարանի կողմից նրա դատապարտումը հայ երիտասարդության մի մասին բերեցին այն վերջնական համոզման, որ հայրենիքի ազատագրության միակ միջոցը զինյալ պայքարն է:

Հաջորդ տարիների ընթացքում ստեղծվում են այնպիսի խմբավորումներ, ինչպիսիք են ԱՍԱԼԱ-ն (սկզբում կրում էր «Արգելափակեալ հերոս Գուրգէն Եանիգեանի հեղափոխական խմբակ» անունը), ՀՅԴ-ի կողմից ստեղծված «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ» կազմակերպությունը: Նրանք հարձակումներ էին իրականացնում աշխարհում թուրքական իշխանության ներկայացուցիչների հանդեպ ու երկար ժամանակ սարսափի մթնոլորտում էին պահում թուրք հասարակությանը՝ ծանրակշիռ ներդրում ունենալով հայոց նոր ժամանակների զինյալ ազատագրական պայքարի մեջ:

երկաթուղագծի համար իրանական կողմից պետք է ստանար 2 մլն ԱՄՆ դոլար, սակայն իրանական կառավարությունն այդպես էլ նրան չի վճարում այդ գումարը (Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 175):

[40] ՀԱԱ, ֆ. 440, g. 1, գ. 43, թթ. 1-55:

[41] ՀԱԱ, ֆ. 440, g. 1, գ. 40, թ. 8, 12: Նույն տեղում, գ. 42, թթ. 1-15: The Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), p. 176: Յանիկյան Գ., Նպատակ և ճշմարտություն, էջ 18, 149:

[42] ՀԱԱ, ֆ. 440, g. 2, գ. 18, թ. 1: Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 18-19: Լեւոն Երկաթ, Գ.Եանիկեանի կենսագրութիւնը, Նոր սերունդ, փետրուար, 1977, էջ 6: The Armenian Secret Army for the Liberation of Armenia(ASALA), p. 176:

[43] Յանիկյան Գ., Նպատակ եւ ճշմարտություն, էջ 176:

[44]Գուրգեն Յանիկյան՝ Հայկական Նեմեսիս, 13 ապրիլ, 2021, http://www.aniarc.am/2021/04/13/gurgen-yanikyan-armenian-text-new-york-times/:

Միայն 1973-1997թթ. ԱՍԱԼԱ-ն ունեցել է 256 թիրախ և 45 մահ, որից 36-ը եղել են թուրքեր[45]: ԱՍԱԼԱ-ի առաջին[46] և վերջին[47] գործողությունները Գուրգեն Յանիկյանի անունով են:

Յանիկյանը գրում է. *«Ես անհատս ստեղծեցի 27 Յունուարը երեք պատճառով. 1. Իմ ցեղիս համար, որովհետեւ ես Հայ եմ, 2. Իմ երկրիս համար, որովհետեւ ես ամերիկացի եմ,3. Մարդկութեան համար, որովհետեւ ես Մարդ եմ»[48]:*

Տարիներ անց մեծ հայի աճյունն իր վերջնական հանգրվանը գտավ Մայր հայրենիքում: 2019 թվականի մայիսի 5-ին հերոսի մասունքներն ամփոփվեցին Եռաբլուրում՝ ԱՍԱԼԱ-ի նահատակների համար առանձնացված գերեզմանատանը՝ Մայր Աթոռի երիցագույն միաբան Ոսկան արքեպիսկոպոս Գալփակյանի խնկարկման ներքո[49]: Հաշվի առնելով ժամանակի միջազգային քաղաքական իրավիճակը՝ Յանիկյանի փաստաբան Հարի Յումենի այրին՝ Մարիա Յումենը, հերոսի աճյունատուփը 35 տարի պահել էր, որպեսզի հարմար պահի այն անվտանգ փոխադրվեր Հայաստան: Թուրքիայի ԱԳՆ-ն բողոքեց Յանիկյանի մասունքները Եռաբլուրում ամփոփելու դեմ և հանդես եկավ դատապարտող հայտարարությամբ[50]:

Գուրգեն Յանիկյանի գործողության 50-ամյակին ընդառաջ «Հայաստանի ժողովրդական շարժում» կազմակերպությունը 2022 թվականին հայտարարել է Յանիկյանական և նախաձեռնել «Նպատակ և ճշմարտություն» խորագրով միջոցառումների շարք[51]: Միջոցառումների մեկնարկը տրվեց 2022 թվականի մարտի 4-ին կայացած «Գուրգեն Յանիկյան և ԱՍԱԼԱ» խորագրով գիտաժողովի շրջանակներում և որը շարունակվելու է մինչև 2023 թվականի սկիզբը:

Ամփոփելով նշենք, որ Գուրգեն Յանիկյանը սկզբնավորեց հայկական նորագույն ազատագրական պայքարի զինյալ փուլը, որը հետագայում ընդգրկեց երիտասարդության լայն շրջանակներ, աշխարհի ուշադրությունը սևեռեց հայոց պահանջատիրության վրա և ամրագրեց այն համոզմունքը, որ Հայ դատի լուծման համար անհրաժեշտ են բոլորովին նոր մեթոդներ ու ուղղություններ:

Գուրգեն Յանիկյանը համոզված էր, որ եթե հայոց ցեղասպանության հարցը գնահատական չստանա, ապա մարդկությունը իսպառ չքանալու է այս երկրագնդի վրայից, քանզի քանի դեռ

---

[45] Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ), Վաւերագրութիւն զինեալ եւ հրատարակչական գործունէութեան, էջ 8:

[46] Առաջին գործողությունը տեղի է ունեցել 1975թ. հունվարի 20-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Բեյրութի գրասենյակի ռմբահարումով:

[47] Վերջին գործողությունը տեղի է ունեցել 1997թ. հունիսի 21-ին Բրյուսելում Թուրքիայի դեսպանատան դեմ (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ (ԱՍԱԼԱ), Վաւերագրութիւն զինեալ եւ հրատարակչական գործունէութեան, էջ 55):

[48] ՀԱԱ, ֆ. 440, ց. 2, գ. 13, թ. 49:

[49] Եռաբլուրում ամփոփվեցին Գուրգեն Յանիկյանի մասունքները (տեսանյութ), 5 մայիսի, 2019թ., https://a1plus.am/hy/article/339422: ԱՍԱԼԱ-ի հոգեհայր Գուրգեն Յանիկյանի մասունքները բերվել են Երևան, 01 մայիս 2019, https://www.irazek.am/hy/news/10022: Գուրգէն Եանիքեանի մասունքները բերուած են Երեւան, 05/02/2019, https://massispost.com/am/2019/05/02/գուրգէն-եանիքեանի-մասունքները-բերու/:

[50] Թուրքիան դատապարտել է Գուրգեն Յանիկյանի մասունքների ամփոփումը Եռաբլուր պանթեոնում, 07/05/2019, https://azat.tv/turkian-datapartel-e-asalayi-hogevor-himnadir-gurgen-yanikyani-masunqneri-ampopumy-erablur-panteonum/

[51] Բացառիկ հայը՝ Գուրգեն Յանիկյան, 13 փամփուշտ՝ հանուն հայի արթնության եւ ընդդեմ աշխարհի անտարբերության, մարտի 5, 2022, https://hhpress.am/socium/2022/9377/: Յանիկյանական տարի՝ «Նպատակ եւ ճշմարտություն», 25/03/2022, https://azg.am/news/յանիկյանական-տարի՝-նպատակ-եւ-ճշմարտ/:

աշխարհում մի հայ կա, նրա զավակները չեն մոռանալու ու ներելու թուրքերին իրենց կատարածի համար և պահանջելու են արդարություն և հատուցում[52]:

Յանիկյանը մշակեց հայության նորագույն պայքարի գաղափարախոսությունն ու մարտավարությունը՝ հերթական անգամ հավաստելով, որ միայն ուժով, հայության համախմբվածության և միասնականության շնորհիվ է հնարավոր հասնել համազգային հարցերի լուծմանը:

Գուրգեն Յանիկյանը

1901 1913 1908



Հավելված 1

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԿՈՉԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ՄԱՏԱՂ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Դուք, որ չարչարեալ ազգի արգանդից ծնունդ էք առել, հեռու մայր երկրից եւ այն դեւերից, որոնք դարերով արիւն են քամել ձեզ ծնող ցեղից, օրինակ վերցրէք ձեր նախնիքներից…

Ձեր բաղդն է եղել պարզ երկրակամար, կեանքերդ չեն մարուել սպացած վէրքերից եւ չեն բաժանել ձեզ ձեր հարազատներից:

Ձեզ հետ միասին ծնկաչոք ընկած կը փառաբանեմ դրօշը աստղերով, որ հեռու է պահել ձեզ այդ բոլորից իւր ծածանումով:

---

[52] Յանիկյան Գ., Իր եւ ուրիշների մասին, էջ 255:

Աչքերդ բացած մանուկ հասակից, դուք ամբողջ թափով օգտուել էք կեանքից եւ Արարչութեան բոլոր բարիքներից…

Այդպէս է եղել եւ այդպէս էլ կայ…

Բայց… Թող ազատութեան հարբեցնող գինին չդառնայ դագաղը անցած օրերին եւ խեղդելով միտքն ու հոգին՝ շեղէ ուղին մատաղ կեանքի արեան ձայնի…

Ինչո՞ւ քայլէք աչքով խաւար, որ չտեսնէք լոյսը փայլող, ձեր պապերի գովքը անող ներկուած դաշտը Աւարայր:

Ինչո՞ւ մոռնաք, գնչու դառնաք, անցած օրերը ձեր ազգի եւ չձգտէք անխախտ կամքով հասնել նորից մեր հին տաճարը փառքի:

Քանիցս անգամ մեր պատմութեան մէջ Արտաւազդների ոգիներն անմահ՝ ծնունդ են առել նոր անուններով…

Քանիցս անգամ պայծառ ճակատները դաժան թշնամու առաջն են կանգնել եւ ազգիդ վերայ թափուող նետերը իրանց կուրծքերին հաւաքել…

Արիւնով ներկուած դաշտերը չորացած, ձեզ են սպասում, հայ զաւակներին, որ միակ կամքով ընդմիշտ ձուլուած, նոր շունչ ներշնչէր վարդերին թառամած:

Քանդուած գիւղերի փլատակների վերայ նոր կեանք պիտ կառուցէք ժայռի կարծրութեամբ, որ ամէն յորձանք գալիք օրերի փրփուր դառնալով նրանից փախչի:

Երբ կարօտահար սրտերը բիւրերի ախն են քաշում իրանց եղբայրների, լեցուէ՛ք հաւատքով, որ մեր լեռների գագաթներից դէպ վեր դրօշը ազգութեան պիտի ծածանուի…

Թող այն ժամանակ խիղճը մարդկութեան զարթնի իւր քնից, տեսնի աչքերով մի ազգ իւր մարմնով, որ ամբողջ հոգիով դարերից ի վեր միշտ մաքառել է ընդդէմ ստրկութեան…

Գուրգէն Եանիգեան

«Մշակ» շբթ. (Ֆրեզնօ, Ա.Մ.Ն.), 21 Դեկտ. 1951

Հավելված 2

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՄՆ-ՈՒՄ 300 ՀԱՅԵՐԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՆԱՄԱԿԸ ԱՆՀԱՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԴԵՄ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ. . .

Այս նամակը ընդունէք որպէս մի կարեւոր նամակ, որովհետեւ կապուած է մի հարցի հետ, որը ահա աւելի քան 50 տարի տանջում է ամեն մի իսկական Հայի միտքն ու հոգին: Կասկած չունեմ, որ քո նախնիկներից էլ ոմանք զոհ են գնացել բարբարոս գազաններին, որոնց դժբաղդաբար մարդկութիւնը ԹՈՒՐՔ ցեղ ու ՏԱՃԻԿ կառաւարութիւն է անուանում:

Նրանք նախօրոք կազմած ծրագրով ոչ միայն մոտ երկու միլիոն մեր ցեղակիցներին ոչնչացրին, այլ եւ գրաւեցին նրանց հողերը ու ունեցւացքը վեց միլիարդ դոլլար արժողութեամբ:

Նրանց հաջողուեց այս ոճրագործութիւնը, որովհետեւ կային ազգեր, որոնք օգնում էին նրանց:

Կային եւ ազգեր, որոնք ծածկելով իրանց ագայ ու եսասեր դեմքերը բարեկամական դիմակով մարդկութեան անունից համբերութիւն էին քարոզում եւ մինչեւ այսօր էլ անում են նույնը:

Ազնւութիւն, արդարութիւն ու պատիւ-մեր ներկայ կեանքում, շատ ազգերի համար արդէն դառել են անիմաստ բառեր:

Բոսֆորի ափի ոճրագործ գազանների կառաւարութիւնը –շատ երկրների լրագրներում եւ նախագահների ճառերում գնահատւում է որպէս մի արժանի ցեղ ու կառաւարութիւն, որ քայլում է մարդկային եղբայրութեան շարքերում, որը արժանի է օգնութեան...

Փառաբանւում են ոչ միայն նրանց ներկան, այլ եւ նրանց անցեալը եւ աշխատում են մոռացութեան քողով ծածկել նրանց անցած արիւնով լի ներկած ուղին:

Երբ մեր ներկայ կեանքը ցոյց է տալիս որ միայն ուժն արժէք ունի մեր այս աշխարհում, դէ այն ժամանակ ինչ իրաւունք ունենք մենք ՀԱՅ ԱՆՀԱՏՆԵՐԱ-որպէս ԴՕՆ ԿԻՇՈՏՆԵՐ սաւառնել երկնքում արդարութիւն ու իրաւունք աղերսելով:

ՀԱՅԿԱԿԱՆ կոչւած հարց ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ... Դա ցնորք է եւ ինքնախափեթութիւն... Գոյութիւն ունի ՀԱՅ ԱՆՀԱՏԻ հարցը, որովհետեւ քո եւ իմ նախնիկներին են թալանել ու սպանել...Մեր մայրերին են բռնաբարել ու վաճառել...

ՀԱՅ ԱՆՀԱՏՆ է որ վերջապէս զարթնելով երկար քնից պետք է անհատապէս ներկայացնէ իր պահանջները փաճիկ գազաններին մի այնպիսի լեզուով որ նրանց հասկանալի լինի:

ՈՉ ԱՋԳ, ՈՉ ԵՐԿԻՐ, ՈՉ ԵԿԵՂԵՑԻ, ՈՉ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ինչ անւան տակ էլ գոյութիւն ունեն, կապ ունենալու չեն այս նոր ձեւի պատերազմում, որը ՀԱՅ ԱՆՀԱՏԸ հայտարարել է փաճիկ գազաններին եւ նրայ կառաւարիչներին...եւ շարունակելու է մինչ վերջնական հաղթանակը:

Նեմեսիս դարձած հայ ԱՆՀԱՏՆԵՐԻՆ հարկաւոր չեն պատերազմի դաշտեր, ատոմային ռումբեր... նրանց բաւական է իրանց կամքը ու ցանկութիւնը որ իրանց իրաւունքները պահանջեն ու ստանան:

ՀԱՅ ԱՆՀԱՏԸ ստեղծելու է մի դրութիւն, որ վայրի փաճիկ ազգը չունենայ ոչ մի հնարաւորութիւն հարաբերելու ուրիշ ազգերի հետ ամբողջ երկրագնդում:

Տաճիկ կոչւող կառաւարութեան ներկայացուցիչները ոչնչացուելու են ամեն մի տեղ ամեն մի երկրում անխտիր ինչ անւան տակ էլ հրապարակ գան:

Աշխարհումս ապրող թուրք ցեղին պատկանողների հետ մենք գործ չունենք –մենք ատում ենք նրանց, բայց Հայ անհատը չի ընտրել նրանց... ՄԵՐ գործը ՏԱՃԻԿ կոչւող կառաւարութեան ներկայացուցիչների հետ է լինելու ամենուրէք որտեղ նրանք հրապարակ գան:

Երբ այս նամակը կը կարդաք - արդէն ես, որ հեղինակն է այս նոր ձեւի պատերազմին ու տարիների ընթացքում փայփայել է այս գաղափարը-արդէն անցել է նրա իրագործման...

Ես լինելու եմ եւ առաջինը եւ լինելու եմ օրինակ շատշատերին...

Կասկած չունեմ որ ինձ նման մտածողների ցանկը կարճ լինելու չէ...

Կասկած չունեմ որ շատերն են գնալու այս նոր ձեւի պատերազմի ճանապարհով...

Կասկած չունեմ որ ամեն մի Հայ անհատ պիտ աշխատի տարածել այս նոր ձեւի պատերազմի գաղափարը եւ պետք եղած դեպքում ՀԱՅ ԱՆՀԱՏԸ- ՕԳՆԵԼՈՒ Է ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ:

Կասկած չունեմ, որ ներփակած աւելորդ օրինակները կը տարածեք ուրիշ վայրեր:

ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆ, Նեմեսիս դարցած մի ՀԱՅ ԱՆՀԱՏ որը հեղինակն է այս նոր ձեւի պատերազմին, որը միակ միջոցն է անհատի համար - ստանալ իրանից գողացուածը:

Գուրգէն Եանիկեան, 1972թ.

ՀԱԱ, ֆ. 440, ց. 1, գ. 31, թ. 2: Պատճեն: Մեքենագիր:

Հավելված 3

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԲԱՆՏՈՒՄ՝ ՅՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԽՑՈՒՄ

Սիրելի՛ հայրենակիցներ...

Ես խօսում եմ Ձեզ հետ իմ բանտի խուցից, որից դուք կը լսեք իմ խօսքերը:

Կարող են մարդիկ լեռներ խորտակել, իրենց բազկին ուժով գետերի ընթացքը փոխել, բայց կարելի՞ է արդեոք, հնարավո՞ր է ազատութեան ու արդարութեան տենչը խեղդել մարդ կոչուած էակի մէջ: Կարելի՞ է արդեոք ստիպել որ մի անհատ, որը գիտէ թէ ինչ ազգի զաւակ է եւ թէ ինչպիսի նախորդներ է ունեցել, մոռանա այս բոլորը ու հպատակւի չարին ու անարդարութեան մեր այս աշխարհում: Թող աշխարհը գիտէնա որ մարդկութիւնը հայ ազգին պարտք ունի վճարելիք:

Տասնեակ դարեր առաջ մեր ազգը պատմութիւն է ունեցել:Հայ ժողովուրդը յուր գնահատելի լուման է մտցրել մարդկութեան յառաջադիմութեան գործում, երբ այսօրուա մեծ ազգերը որ իրենց զարգացած են համարում՝ մերկ, կիսավայրենիի պէս ապրում էին Եվրոպայի անտառներում ու լեռներում: Այսօրուա զարգացած ազգերի հիմքը ազգերի աշխատանքների արդիւնքն է, որոնց թվում մեր ցեղը վերջին տեղը չի գրաւում:

Հպա՛րտ եմ, որ հայ եմ: Հպա՛րտ եմ, որ հա՛յ եմ ծնվել: Հպա՛րտ եղեք և դո՛ւք՝ իմ սիրելի հեռաւոր ցեղակիցներ, որ պատկանում եք մի ազգի, որքանիցս անգամ ապացուցել է աշխարհին, որ կարող է տալ յուր թանկագին զաւակների արիւնը ազատութեան ու արդարութեան համար: Նոյնիսկ այսօր՝ ցրուած հայութեան բեկորները հեռաւոր Լիբանանում փաստեցին մի անգամ եւս, որ ազգի զաւակների կուրծքերը կարող են պատնեշներ կազմել երբ վտանգը սպառնում է ազգին:

Լիբանանի նահատակները 20րդ դարում մեր սուրբերն են որ իրենց մատաղ, երիտասարդ կեանքերը զոհելով եղան նահատակ ազատութեան Բագինի առաջ: Նրանք անջինջ տառերով գրեցին իրենց անունները այն գրքում, որտեղ դարերի ընթացքում գրվել են մեր հերոսների անունները, մեր ֆիդայիների անունները, որոնք սիրոյ փոխարէն մահն էին գրկել, հայկական լեռներում պաշտպանում էին ցեղի անունը ու պատիւը: Փա՛ռք այդ նահատակներին, փա՛ռք անցեալի զոհերին, փա՛ռք մեր ժամանակվա, իրենց կեանքը ազգին նուիրող մեր մատաղ սերնդին, որ ազգի նորագոյն պատմութիւնը գրեցին:

Ամէն մի ազգի ապագան իր մատաղ սերունդի ձեռքն է: Դո՛ւք՝ իմ սիրելի երիտասարդ ցեղակիցներ, որ ցրուած եք աշխարհի չորս կողմը, պիտի ապացուցէք աշխարհին, որ արժանի հետեւողներն եք ձեր մեծերի: Ա՛յն մեծերին, որոնք դէն շպրտելով ամէն ինչ, ու զոհելով իրենց կեանքերը բարձրացրին ազատութեան դրօշը ուաւեստեցին աշխարհին ու մարդկութեանը, որ հատուցման ժամը հասել է: Ցնցեցին հի՛մքը մարդկութեան ու յայտնեցին, որ չ՛ուզէն այլեւս լինել խաղալիք ուրիշներու համար, այլ կ՛ուզէն որ իրենց տեղն էլ գրավեն, իր արժանի տեղը, ու ոխերիմ թշնամին՝ մարդկային դեմքով գազան թուրքը տա պատասխան իր գործած ոճրագործութիւնների համար:

Տարիներ առաջ, որպէս կամաւոր ես տեսել եմ մեր հայրենի գետերը արիւնով ներկված, տեսել եմ թէ ինչպէս մեր գետերի ալիքները տանում էին իրենց հետ մեր հարազատների անշունչ դիակները, անշունչ կտրված գլուխները, կացնահար արած հայու բալիկները, արիւնաքամ եղած մեր մայրերը ու բռնաբարված մեր քոյրերը: Տեսել եմ այս բոլորը ու սարսափել, թե ո՞ւր է մարդկութեան խիղճը, որտե՞ղ է պահվել արդարութեան աստվածը.... Պիտի սպասե՛նք, որպէս ապացոյց մեր ազգի արժէքին, թող մարդկութիւնը նայէ մեր փոքրիկ հայրենիքին, որ այսօր մենք ունենք, որը զարմացնում է աշխարհը յուր գործերով: Մեր իսկական հայրենիքը՝ Հայաստանը, ունի 140.000 քառակուսի կմ տարածութիւն: Այսօրուա մեր փոքրիկ հայրենիքը ունի միայն 14.000

քառակուսի կմ, որի վերայ հայ ժողովուրդը ցոյց է տալիս յուր արժէքը: Մյուս մասը մեծ ազգերը իրենց անձնական շահերու համար նվեր են տվել տաճիկ կոչուած, Սիբերիայի տափաստաններից եկած, մոնգոլյան ցեղին պատկանող արիւնարբու գազաններին՝ թուրք կոչուող ազգին:

Մինչեւ ե՞րբ սպասենք...

Սիրելի՛ հայրենակիցներ, կարծեմ կարիք չկա որ հիշեցնեմ ձեզ, որ ես խոսում եմ բանտից, ցմահ դատապարտուած, դրա համար էլ հասկանալի է, որ ես իմ արտայայտութիւնների մէջ զգոյշ եմ լինելու: Բանտարկութեան պատճառը ձեզ յայտնի է: Ես անարդարութեան զո՛հն եմ: Մեր Հայկական դատը, որը ինձ համար մի հասկացողութիւն ունի, մեզանից գողացած ու թուրքին նուիրած մեր հայրենական հողերը հետ ստանալ մեր ազգի համար եւ ստանալ թուրքից մեր ազգին հասցրած վնասների վճարումը: Ինչինչ պատճառներով նրանք, որոնք վերցրել էին իրենց վերայ պաշտպանելու և հետապնդելու մեր Հայկական դատը՝ հետ էին մնացել կեանքի օրվա թելադրանքներից եւ զբաղուած էին ուրիշ հարցերով, որոնք հաճախ կապուած էին իրենց անձնական շահերու հետ:

Դրութեան արդիւնքը եղաւ այն որ մեր Հայկական դատը գերեզման էր դրուած ու պատրաստվում էին ծածկել մոռացութեան քողով որ հարցը վերջնական փակուի: Որպէս մի հայ անհատ ես չէի կարող ընդունել այդ: Պապերիցս ստացած արդարութեան ոգին իմ ներսում հրաբուխ դարձած դուրս ժայթքեց ու այրեց թաղումը կատարողների դեմքերը ու ես մաքրելով տասնեակ տարիների մոռացութեան փոշուց մեր դատը, Հայկական դատը դրի մարդկութեան առաջ: Այս ոչ միայն արթնացրեց հայ ժողովուրդը, այլեւ փաստեց նրան որ մինչ այդ Հայ դատի հարցով զբաղուողները աշխատել էին նրան քնացնել ու կերակրել խոստումներով, որովհետեւ իրենք սնանկացել էին իրենց գործերով ու զբաղուած էին միայն նիւթականով ու իրենց գրաւած բազկաթոռներով:

Ես զգում էի, որ մենակ մնալու չեմ, ես գիտէի, որ իմ երիտասարդ ցեղակիցները ո՛չ միայն վերցնելու էին իմ պարզած ազատութեան ու արդարութեան դրօշները, այլեւ ավելի բարձր էին բարձրացնելու ու տանելու էին ու հասնելու մինչեւ Արարատի գագաթը եւ պարզելու էին այնտեղ, որ աշխարհում ցրուած հայուզաւակները տեսնեն ու լսեն նրա կոչը, որ հասել է ժամանակը մեզանից գողացածին տե՛ր կանգնելու ու փլատակների վերածուած մեր ավանները սկսեն կառուցվել որ զարմացնեն աշխարհին հայու ոգո՛ւ, ուժի՛, կամքի անմահութիւնը փաստելով:

Ես գիտէի, որ անհատս մենակ մնալու չէր: Հազարաւոր ինձ նմանների կուրծքերում նոյն հրաբուխն էրկեանք առնելու, ու մեր վայրագ թշնամի թուրքից պատասխան պահանջելու: Քով քովի գալով, մի նպատակի ծառայելով հայ անհատները միացան ու աւետեցին աշխարհին, որ ծնունդ է առել Հայ Ազատութեան Գաղտնի Բանակը, որի արմատներն են ամէն տեղ որտեղ հա՛յն է ապրում որպէս թափառական ազգ: Օրհնութեան ուհաջողութեան համբոյր եմ դրոշմում այդ բանակի բոլոր անդամներու հպարտ դեմքերին, նրանց ծնունդը լուսավորեց խուցս մեր ազգի գալիք ապագան: Նրանք մէկ թշնամի ունեն՝ գազան թուրքը եւ մի նպատակ՝ հետ ստանալ մեր պապական հողերը:

Կա՞ արդեոք աշխարհումս մեկ հայ, որի երակներում հոսում է Նաիրեան արիւնը, որ չսիրէնրանց, որ չգուրգուրէ նրանց վերայ, չհպարտանա նրանցով ու չցանկանա ինքն էլ լինել անդամը այդ ազատութեան բանակին, որոնք խօսքերի հեղեղի փոխարէն գործ են ցոյց տալիս: Պատմութիւնը մեզ փաստում է որ խօսքերը քամին է տանում, խօստումները մոռացվում են, արդարութիւնուազատութիւն բառերը կորցնում են իրենց իմաստը եթէ նրանք չեն պաշտպանվում անհատներից կազմուած ուժեղ բռունցքով: Թո՛ղ իմ սիրելի երիտասարդ մատաղ սերունդը

գիտէնա, որ դեռ մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքին ոչ մի անգամ չի պատահել, որ մի ցեղի ազատութիւնը տրուի նրան ոսկե պնակի վերայ: Ո՛ւժն է թելադրում մարդկանց գործերը և ո՛չ թե փառաբանած սերն ու գթութիւնը: Հայ Ազատութեան Գաղտնի Բանակը այն բռունցքն է որհայ անհատները կազմեցին, այդ կենդանի բռունցքն է որ պիտի ծնկի բերէ մեր ոխերիմ թշնամի թուրքը և դնէմարդկութեան առաջ մեր իրավացի պահանջները ու առաջարկէ որ վերջապես մեղաւորները ընդունեն իրենց սխալները ու ուղղէն:

Հեռաւոր, բայց սիրելի՛ հայրենակիցներ,այս ուղերձը ձեզ երբ տոնում եք հպարտութեամբ ձեր գործունէութեան 41ամեակը, թող լինի իմ կտակը ձեզ, մանաւանդ երիտասարդ սերունդի համար, որոնք կերտելու են մեր ապագան: Համոզուած եմ, որ իմ ցոյց տված ճանապարհով է քայլելու մեր երիտասարդ սերունդը որ ուրախութեան ու հրճուանքի ժպիտ է բերելու մեծերի դեմքին ու հաւատք նրանց սրտերում որ մոտ է ապագան, մոտ է հաշուեպահանջի ժամը: Երկաթապատ իմ խուցումսդա կլինի ամենաթանկագին նվերը ինձ՝ ալեզարդ ծերունուս որ զոհաբերեց իր կեանքը իր ժողովրդին:

Բավական չէ՞ արդեոք, որքան սպասեցինք. . .

Յտեսութիւնեւյաջողութիւն ձեզ իմ հեռաւոր հայրենակիցներ, որոնց կ՛ուզեմ անխտիր սեղմել իմ բաբախող սրտին ու դրոշմել հայրական համբոյրը հպարտ ճակատներին:

Խօսքով ոսկե պնակի վերայ ոչ ոքի ազատութիւն, երկիր չի տրուիր: Բայց ի՞նչ կարող եմ անել ես: Միայն կարող եմ ուրախանալ, երբ լրագիրներում կարդում եմ, որ ստեղծուել է մի բռունցք, որը կոչվում է Հայ Ազատության Բանակ: Այդ բռունցքն է որ պիտի գործէ այսօր: Իմ միակ հույսը դրա վերայ է: Ո՛չ կուսակցութեան, ո՛չ ճառեր, ո՛չ դպրոցներ շինելով, տախտակներով, բողոքագիր գրելով.... դրանք բոլորը աւելորդ խօսքեր են: Միայն ուժն է թելադրում, այդ է հարկաւոր: Եվ այսօր հրապարակ են եկել երիտասարդներ որոնք գնում են հենց այն ճանապարհով որ ես ցոյց տվեցի:

Ես հպա՛րտ եմ, հպա՛րտ եմ, որ նրանք գնում են այդ ճանապարհով որ շարունակէն իմ ստեղծած գործը: Ես շնորհակալ եմ, նոյնիսկ նրանք իրենց կոչում են Եանիկեանի զաւակներ: Ես կընդունեմ նրանց գրկաբաց այդ զաւակներին:

Գուրգեն Եանիկեան, 1979թ.
https://www.youtube.com/watch?v=RaLQaZf7F2U
https://www.facebook.com/watch/?v=1187704991367991

GOURGEN YANIKIAN, THE FIGHTER AND IDEOLOGIST OF THE NEW ARMENIAN ARMED LIBERATION STRUGGLE

PETROSYAN KNARIK
PhD in Historical Sciences
GSU lecturer
Head of Department of Research Works
and International Relations of the National Archives of Armenia
e.mail: k_narik@mail.ru

Gourgen Yanikian (1895-1984), a talented engineer, writer, public speaker, builder and inventor, the spiritual father of the Armenian Secret Army for the Liberation of Armenia (ASALA), is considered the fighter and ideologist of the new Armenian armed liberation struggle. Convinced that only with the use of force it is possible to focus the attention of the international community on the fair trial of the

Armenian people, 78-year-old Gourgen Yanikian, an eyewitness and survivor of the Armenian Genocide, most of whose family members were victims of the massacres, on January 27, 1973, killed the Turkish consul and his assistant at the Baltimore Hotel in Santa Barbara, California, starting the new Armenian national liberation armed struggle. On July 2, 1973, Yanikian was sentenced to life imprisonment, and after spending 10 years in prison at the request of the authorities on February 10, 1984, he was transferred from the prison to the hospital, where he died 17 days later. And only years later, on May 5, 2019, the remains of the great Armenian found their final resting place in the Motherland. The remains were buried in the "Yerablur" military pantheon in the cemetery dedicated to ASALA martyrs.

Before the Operation dating to January 27, 1973; on December 26, 1972, Yanikian sent open letters to the US President, the Senate, the Congress, the editors of American and Armenian newspapers and 300 Armenians about his political plan, announcing the "war of the Armenian individual against the Turk", calling on the sons of the Armenian nation to turn into "Nemesis" and hit the enemy everywhere.

The bullets fired by the hero Gourgen Yanikian were not only solving the issue of revenge but also were clarifying the political way to pursue the Armenian issue. In 1975, two years after the Operation, the new stage of the Armenian claims began. The Armenian Secret Army for the Liberation of Armenia came to the scene and began a worldwide armed struggle against Turkey, which seized Armenian land; and all those accomplices who helped the Turks continue to violate the fair rights of the Armenian people.

Even today, in the conditions of geopolitical developments and regional transformations, the message of the hero Gourgen Yanikian to the generations is more relevant than ever: to fight an individual war against the enemy for the sake of the protection and salvation of the Armenian people and the peaceful coexistence of the mankind.

Key words: *Gourgen Yanikian, the Armenian Genocide, the Armenian National Committee, the Armenian Issue, the Armenian Nuremberg, Operation Nemesis, Armenian Secret Army for the Liberation of Armenia, Armenian Genocide Justice Fighters, Yerablur.*

ГУРГЕН ЯНИКЯН - БОРЕЦ И ИДЕОЛОГ НОВОЙ АРМЯНСКОЙ ВООРУЖЕННОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ

ПЕТРОСЯН КНАРИК
Кандидат исторических наук
Преподаватель ГГУ
Глава отдела научно-исследовательских работ
и международных связей Национального архива Армении
электронная почта: k_narik@mail.ru

Гурген Яникян (1895-1984), талантливый инженер, писатель и публицист, строитель и изобретатель, духовный основатель Армянской секретной армии освобождения Армении (АСАЛА), считается борцом и идеологом нового армянского вооруженной и освободительной борьбы. Убежденный, что только силовым путем можно привлечь внимание международной общественности к справедливому суду армянского народа, 78-летний Гурген Яникян, очевидец и

переживший Геноцид армян, большинство членов семьи которого стали жертвами Геноцида, 27 января 1973 года убил турецкого консула и его помощника в отеле «Балтимор» в Санта-Барбаре, штат Калифорния, начав новую армянскую национально-освободительную вооруженную борьбу. 2 июля 1973 года Яникян был приговорен к пожизненному заключению и проведя в заключении 10 лет, по требованию властей 10 февраля 1984 года был переведен из тюрьмы в больницу, где через 17 дней скончался. И только спустя годы, 5 мая 2019 года, прах великого армянина обрел последнее пристанище на Родине. Останки были захоронены в воинском пантеоне «Ераблур» на кладбище, посвященном мученикам АСАЛА.

Перед Операцией 27 января 1973 года, 26 декабря 1972 году Яникян направил президенту США, Сенату, Конгрессу, редакторам американских и армянских газет и 300 армянам открытые письма о своем политическом плане, объявляя «войну армянской личности против турков», призывая сыновей армянского народа превратиться в «Немезиду» и поразить врага повсюду.

Пули, выпущенные героем Гургеном Яникяном прояснили политический путь решения Армянского вопроса. В 1975 году, через два года после Операции, начался новый этап армянских требований. Армянская секретная армия освобождения Армении начала всемирную вооруженную борьбу против Турции, захватившей армянские земли, и всех тех пособников, которые помогали туркам и продолжают нарушать справедливые права армянского народа.

Даже сегодня, в условиях геополитических событий и региональных трансформаций, как никогда актуален посыл героя Гургена Яникяна поколениям: вести индивидуальную войну против врага ради защиты и спасения армянского народа и для мирного сосуществования человечества.

Ключевые слова: *Гурген Яникян, Геноцид армян, Армянский Национальный Комитет, Армянский вопрос, Армянский Нюрнберг, Операция «Немезис», Армянская секретная армия освобождения Армении, Борцы за справедливость Геноцида армян, Ераблур.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.07.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.09.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: